

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

N	Օրենսդրական ակտի անվանումը	Նշումներ, ներկայացում
1.	<p>ԳՆԱՍ N 548, Մարտի 1, 2016</p> <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրաման՝ «ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների» դասակարգիչ» հաստատելու մասին</p> <p>Հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>«Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը» այսուհետ, ՏԻՀԴ սահմանում է ՀՀ տնտեսության ճյուղերը՝ համապատասխան կոդերով:</p> <p>Ըստ ՏԻՀԴ-ի Ըստ ռեզիդենտության հատկանիշի ինստիտուցիոնալ տնտեսական միավորները բաժանվում են երկու խմբի՝ 1.Երկրի ներքին տնտեսություն և 2.Արտաքին աշխարհ:</p> <p>Երկրի ներքին տնտեսությունն էլ իր հերթին</p> <p>Ա. Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատված</p> <p>Բ. Ֆինանսական կազմակերպությունների հատված</p> <p>Գ. Պետական կառավարման մարմինների հատված</p> <p>Դ. Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատված:</p> <p>Արտաքին աշխարհը իր մեջ ընդգրկում է այն բոլոր ոչ ռեզիդենտ ինստիտուցիոնալ միավորները, որոնք տվյալ երկրի այլ ռեզիդենտ միավորների հետ իրականացնում են գործառնություններ կամ ունեն տնտեսական այլ կապեր տվյալ երկրի ռեզիդենտ միավորի հետ:</p>
2.	<p>ՊՏ N16 (1196) Մարտի 2, 2016թ.</p> <p>ՀՀ Կառավարության 18.02.2016թ. N139-Ն Որոշում՝ «Վերամշակում մաքսային տարածքում», ««Վերամշակում ներքին սպառման համար» մաքսային</p>	<p>Սահմանվում է</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>ընթացակարգերով ներմուծվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները սահմանելու և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները սահմանելու, ինչպես նաև ՀՀ Կառավարության 27.03.2001թ. N239 և 31.12.2000թ. N895 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<ul style="list-style-type: none"> • «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները: • «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները:
<p>3. ՊՏ N16 (1196) Մարտի 2, 2016թ. ՀՀ Կառավարության որոշում` ՀՀ Կառավարության 2003թ. նոյեմբերի 21-ի N 1779-Ն որոշման մեջ</p>	<p>Խոսքը վերաբերում է «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» կառավարության որոշմանը, որտեղ ավելացվել է ցանկ</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<ul style="list-style-type: none"> • Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող, ինչպես նաև արտահանվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի • Մաքսային, ժամանակավոր պահպանման, ազատ պահեստների, անմաքս առևտրի խանութների, ազատ տնտեսական գոտիների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի
<p>4.</p>	<p>ԳՆԱՍ N7 (550) Ապրիլի 1, 2016թ.</p> <p><i>ՀՀ Ֆինանսների նախարարի հրամանը՝ «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու» մասին ՀՀ օրենքի 3 հ.-ի 1-ին մասին 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին</i></p>	<p>Հաստատվել է «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի՝ համապատասխան նշված հոդվածում սահմանված արտոնություններից՝ այն է, «կազմակերպություններն ու ԱԶ-ների կողմից իրականացված օտարման գործարքները ազատվում են ԱԱՀ-ից», հրաժարվելու վերաբերյալ հայտարարության ձևը: Պարզ իրավական փաստաթուղթ է, որ հավաստում է կամարատհայտությունը և այն, որ տեղյակ է, որ հայտարարությունը «ետկանչելի չէ»:</p> <p>Նշում 1. հիշենք, որ նշված օրենքով (դրանում հետագայում կատարված փոփոխություններով) սահմանված էր հետևյալը.</p> <p><i>տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝</i></p> <p><i>ա.</i></p> <p><i>բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերըիրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել սույն ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն:</i></p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>Հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>Նշում 2. 2018թ.-ից ուժի մեջ մտնող հարկային օրենսգիրքը այս առումով աննախադեպ փոփոխություն է մտցնում հարկային օրենսդրական պատմության մեջ, սահմանելով, որ ընդհանրապես հարկ վճարողը կարող է հրաժարվել ամեն տեսակի հարկային արտոնությունից և, որ կարող է իր որոշումը փոխել երկու տարի հետո:</p>
<p>5.</p>	<p>ՊՏ N16 (1196) Մարտի 2, 2016թ</p> <p><i>ՀՀ Կառավարության 18.02.2016թ. N141-Ն Որոշում՝ ՀՀ Կառավարության 01.08.2013թ. N846-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին</i></p> <p><i>Որոշման 1-ին մասը ուժի մեջ է մտնում՝ 01.05.2016թ.-ից, իսկ 2-րդ մասը՝ 01.01.2017թ.-ից:</i></p>	<p>Սահմանվում է, որ</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀԴՄ-ի կտրոնի վրա ապրանքի(ծառայության) անվանումը(տեսակը) նախորդ տարվա արդյունքներով 58.35մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից լրացվում է ԱԴԳՏ առնվազն 4-րդ աստիճանին հմպ.: 2. ՀԴՄ-ի կտրոնի վրա ապրանքի(ծառայության) անվանումը(տեսակը) նախորդ տարվա արդյունքներով 10 մլն դրամից 58.35մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից լրացվում է ԱԴԳՏ առնվազն առնվազն 2-րդ աստիճանին հմպ.:

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>6.</p>	<p>ԳՆԱՍ N7 (550) Ապրիլի 1, 2016թ.</p> <p><i>ՀՀ Ֆինանսների նախարարի հրամանը՝ «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու» մասին ՀՀ օրենքի 3 հ.-ի 1-ին մասին 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին</i></p> <p><i>Հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>Հաստատվել է «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի՝ համապատասխան նշված հոդվածում սահմանված արտոնություններից՝ այն է, «կազմակերպություններն ու ԱԶ-ների կողմից իրականացված օտարման գործարքները ազատվում են ԱԱՀ-ից», հրաժարվելու վերաբերյալ հայտարարության ձևը: Պարզ իրավական փաստաթուղթ է, որ հավաստում է կամարատհայտությունը և այն, որ տեղյակ է, որ հայտարարությունը «ետկանչելի չէ»:</p> <p>Նշում 1. հիշենք, որ նշված օրենքով (դրանում հետագայում կատարված փոփոխություններով) սահմանված էր հետևյալը.</p> <p><i>տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝</i></p> <p><i>ա.</i></p> <p><i>բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերըիրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել սույն ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն:</i></p> <p>Նշում 2. 2018թ.-ից ուժի մեջ մտնող հարկային օրենսգիրքը այս առումով աննախադեպ փոփոխություն է մտցնում հարկային օրենսդրական պատմության մեջ, սահմանելով, որ ընդհանրապես հարկ վճարողը կարող է հրաժարվել ամեն տեսակի հարկային արտոնությունից և, որ կարող է իր որոշումը փոխել երկու տարի հետո:</p>
<p>7.</p>	<p>ԳՆԱՍ N7 (550) Ապրիլի 1, 2016թ.</p> <p><i>ՀՀ Վիճակագրության Պետական Խորհրդի որոշումը՝ «Կազմակերպությունների</i></p>	<p>Որոշմամբ պարզապես սահմանվում է Կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճ.հետազոտության հարցաթերթն ու այն լրացնելու հրահանգը:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>Ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-ՖՀ(տարեկան) պետական վիճակագրական հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	
<p>8.</p>	<p>ԳՆԱՍ N7 (550) Ապրիլի 1, 2016թ ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման՝ ՀՀ Կառավարությանն առնիթեր Պետական Եկամուտների Կոմիտեի Նախագահի 2013թ. Հունվարի 23-ի N25-Ն Հրամանում լրացում կատարելու մասին</p>	<p>Լրացումը վերաբերում է</p> <ul style="list-style-type: none"> • «Շրջանառության հարկի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» հրամանին, որում Շրջանառության հարկի հաշվարկի՝ այսուհետ Հաշվարկի, մեջ շրջանառության հարկով հարկվող եկամուտների տեսակներին ավելացվել է ՀՀ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված երկրորդական հումքի իրացումից ստացվող եկամուտները: Հաշվարկում լրացվում է նաև և այդ եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարը: Ընդ որում, շրջանառության հարկը հարկվող օբյեկտի նկատմամբ 2015 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար հաշվարկվում է 1% դրույքաչափով, իսկ 2016 թվականի 1-ին եռամսյակից սկսած՝ 1.5% դրույքաչափով: • Հաշվարկի՝ Առևտրական (առուվաճառքի) գործունեությունից եկամուտների մասով հարկի հաշվարկման աղյուսակում լրացվող հաշվետու եռամսյակի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի հաշվարկին, որը կատարվում է 2015 թվականի 3-րդ եռամսյակից սկսած, և որտեղ ավելացվել է մի բացառություն, համաձայն որի ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված երկրորդային հումքի իրացումից ստացվող եկամուտների և «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից օգտվող շրջանառության հարկ վճարողների կողմից՝

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>Հրամանն ուժի մեջ է մտնում 01.07.2016թ. և տարածվում 01.07.2016թ.-ից հետո հաշվետու ժամանակաշրջանի վրա:</i></p>	<p>առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի հաշվարկը հարկավոր չէ լրացնել:</p>
<p>9.</p>	<p>ՊՏ N27 (1207) Ապրիլի 6, 2016թ.</p> <p><i>ՀՀ Կառավարության Որոշումը՝ ՀՀ կառավարության 31.07.2001թ-ի N 691 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>Խոսքը վերաբերում է հարկերի և սոցիալական վճարների վճարումն ուշացնելու դեպքում լիազոր մարմինների կողմից դրանց վճարման համար օրենքով սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու վերաբերյալ դատարան հայցադիմումներ ներկայացնելու բացառությունների դեպքերը սահմանելու մասին որոշմանը:</p>
<p>10.</p>	<p>ՊՏ N35 (1215) Ապրիլի 28, 2016թ.</p> <p><i>ՀՀ Կառավարության N413-Ն Որոշումը՝ ՀՀ Կառավարության 2013թ.-ի սեպտեմբերի 5-ի N 968-Ն</i></p>	<p>Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պարտավոր են օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկել: Այժմ 2014 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ կամ 2015 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 115.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողները պարտավոր են տեղեկատվությունն ուղարկել 2017թ.-ի հունվարի մեկից՝ նախկին 2016թ.-ի մայիսի մեկի փոխարեն:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p>որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում 01.05.2016թ.-ից:</p>	
<p>11.</p>	<p>ՊՏ N35 (1215) Ապրիլի 28, 2016 թ. ՀՀ Կառավարության N 415-Ն Որոշում` ՀՀ Կառավարության 2013թ.-ի օգոստոսի 1-ի N 846 Որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից` բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա», 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թվականի օգոստոսի 1-ից:</p>	<p>Հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2004թ. Օգոստոսի 26 N 1325-Ն ու 2005թ. Հունիսի 1-ի N 946-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին N 846-Ն որոշման փոփոխություններն ու լրացումները:</p>
<p>12.</p>	<p>ՊՏ N38(1218) Մայիսի 18, 2016թ. ՀՀ 25.04.2016թ. Օրենքը «Դրամարկղային գործառնությունների</p>	<p>Դրամարկղային գիրքն այդուհետ իրենից կներկայացնի ոչ միայն թղթային, այլև էլեկտրոնային գրանցամատյան:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p>մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին</p> <p>Օրենքն ուժի մեջ կմտնի և կկիրառվի 18.11.2016թ.-ից</p>	
<p>13.</p>	<p>ՊՏ N40(1220) մայիսի 25, 2016թ. ՀՀ Կառավարության՝ 12.05.2016թ. N 493 Որոշում՝ «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը եվ չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի եվ բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության</p>	<p>Որոշումն ընդունվել է «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի, 23-րդ հոդվածի 1-ին մասի «Ժե» կետի, 24-րդ հոդվածի 1-ին մասի և 29-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա:</p> <p>Սահմանում է՝</p> <ul style="list-style-type: none"> • Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները • Համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը • Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը • Բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության ՀՀ-ում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկը: <p>Որոշման գործողությունը ժամանակավորապես դադարեցվել է՝ մինչև 2018թ. հունվարի 1-ը:</p> <p><i>Քննարկվող որոշմանը զուգահեռ 12.05.2016թ-ին ընդունվել է նաև «Լիազորված պետական կառավարման մարմիններ ճանաչելու մասին» թիվ 486-Ն կառավարության որոշումը: Սահմանվել է, որ օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը ՀՀ աշխատանքի և</i></p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p><i>ՀՀ-ում աշխատելու իրավունք սվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին»</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ դրվեց 04.06.2016թ-ին և վերջինիս գործողությունը ժամանակավորապես դադարեցվեց 11.08.2016թ-ի թիվ 827-Ն որոշմամբ:</i></p>	<p><i>սոցիալական հարցերի նախարարությունն է, իսկ աշխատանքի թույլտվությունը կանոնակարգող նորմերի իրականացման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնելու բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը՝ ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:</i></p> <p>Այս որոշման գործողությունը ևս ժամանակավորապես դադարեցվել է:</p>
---	---

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն: